ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ 1948 թ., № 6 *Общественные науки*

Հ. Կարապետյան

ԱԼԵՔՍԱՆԴՐՈՊՈԼԻ 1920 ԹՎԻ ՄԱՅԻՍՅԱՆ ԶԻՆՎԱԾ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլուցիայից հետո, հայ ժողովրդի ամենաոխերիմ թշնամի և դավաճան դաշնակցականները Հայաստանը անջատեցին ռևոլուցիոն Ռուսաստանից, երկիրը նախ հանձնեցին գերմանա-թուրքական զավթիչներին, իսկ հետո դաշն կնքեցին անգլո-ֆրանսիական իմպերիալիստների հետ։ Նրանք մենշևիկների ու ժուսավաթիստների հետ միասին ամբողջ Անդրկովկասը դարձրին արտաքին ինտերվենցիայի և բուրժուա-սպիտակգվարդիական կոնտրռևոլուցիայի համար պլացդարմ ընդդեմ Սովետական Ռուսաստանի։

1918—1920 թվականներին Հայաստանը «որբերի երկիր էր,—ասում է ընկ. Միկոյանը.—արցունքի երկիր, աղքատության ու վայրենի կամայականության երկիր»[1]։ Աղքատությունն ու սովը, աշխատավորների հարստահարումն ու կեղեքումը, տեռորն ու հալածանքը, արտաքին և ներքին աղգամիջյան անընդհատ շարունակվող պատերազմներն ու չարդերը, երկրի ամբողջ էկոնոմիկայի արագ փլուզումը՝ Հայաստանի աշխատավոր ժողովրդին տանում էին դեպի ֆիզիկական կատարյալ ընաջնջում, դեպի կործանում։

Այդ տարիներին՝ չնայած դաժանությամբ ճնշվում էին Հայաստանի բանվորների, գինվորների և աշխատավոր գյուղացիների ելույթները դաշնակների տիրապետության ու ունևոր դասակարգերի դեմ, սակայն այդ ելույթները երբեք չէին դադարում։ Ժողովրդի լայն խավերի ռևոլուցիոնացումը հետզհետե խորանում և լայն չափեր էր ընդունում։

Դաշնակների դեմ ժղվող պայքարում զորանում և ամրանում էր բոլշևիկների պարտիան, որը արդեն խոր արմատներ էր գցել մասսաների լայն շերտերի մեջ ամբողջ Հայաստանում։

Հայ աշխատավոր ժողովուրդը քաջ գիտակցում էր, որ ինքը անխուսափելի կործանումից կարող էր փրկվել միայն ռուս ռևոլուցիոն մեծ ժողովրդի օգնությամբ, ուստի նա պայքարում էր վերականգնել նրա հետ իր եղբայրական դարավոր համագործակցությունն ու կապերը։ Իսկ այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ էր տապալել Անտանտի վասալ դաշնակների տիրապետությունը։

Ահա թե ինչու Կարմիր Բանակի աննախընթաց հաղթանակները և նրա ժուտքը Անդրկովկաս, ռևոլուցիոն պայքարի վճռական թափ հաղորդեցին Հայաստանի աշխատավորներին, որն իր ուժեղ արտահայտությունն ունեցավ մայիսմեկյան մասսայական ցույցերի ժամանակ և նրանից հետո։

[1] «Սովետական Հայաստան», 1937 թ., № 283։

Մայիսմեկյան մարտական ցույցերը ամենուրեք անցան բոլշևիկյան լոզունգներով և ցույց տվին, որ բոլշևիկյան պարտիայի ազդեցությունը չտեսնված բարձրության էր հասել Հայաստանի բանվորների և գյուղացիների լայն զանգվածների մեջ։

«Մայիսմեկյան ցույցերի հաջողությունն ամենուրեք ակնհայտորեն ցույց տվեց,—ասվում է Երկրային Կոմիտեին ուղարկած Արմենկոմի զեկուցագրում,—թե որպիսի խոր արմատներ է ձգել կուսակցությունը լայն մասսաների, այդ թվում նաև զինվորական մասսաների մեջ։ Եղել էին տեղեր, որտեղ ազգաբնակչությունը և զորքը բացառապես մեր դրոշակի տակ էին հավաքվել (Ղարաքիլիսա, Սարիղամիշ)»։[1]

Այդ օրերին ավելի բացարձակ, ավելի մասսայաբար դրսևորվեց աշխատավորների վճռականությունն ու պատրաստակամությունը պայքարելու դաշնակների տիրապետության դեմ։

Մայիսյան ցույցերը ապացուցեցին, որ դաշնակների տիրապետությունը խարխլված է, որ բանվորները, աշխատավոր գյուղացիները և զինվորները դաշնակցության նկատմամբ լցված են ատելությամբ և գնում են բոլշևիկների հետևից, իսկ օրվա բոլշևիկյան լոզունգները արտահայտում են աշխատավորների ցանկությունները։ Եվ որ աշխատավորների հիմնական մասը պատրաստ է պայքարելու դաշնակների հակաժողովրդական տիրապետությունը տապալելու և սովետական կարգեր հաստատելու համար։ Ակներև էր, որ ապստամբության տրամադրությունը համակել էր մասսաներին։

Այս բոլորը կատարյալ շփոթություն էր առաջացրել դաշնակների և մյուս կոնտրռևոլուցիոն պարտիաների շարքերում։ Այդ հաստատում են հենց իրենք՝ դաշնակցականները. «Հայաստանի բոլոր կողմերից հասնող հեռագրերը խռովությունների և ապստամբությունների մասին,—խոստովանում է դաշնակ Վրացյանը,—... շփոթեցրին Երևանի ղեկավար շրջանները։ Ակներև էր, որ կառավարական մեքենան պատրաստ չէր բռնկված հրդեհը մարելու»։[2]

Մայիսյան առաջին օրերի ահռելի խուճապից ուշքի գալով, կոնտրռևոլուցիան դաշնակների գլխավորությամբ սկսում է ուժերի մոբիլիզացում ընդդեմ Հայաստանի ռևոլուցիոն աշխատավորների։ Ռատիսյանի կաբինետը փոխարինվում է «բյուրո» կառավարությամբ, որը գլխավորվում էր դաշնակ Հ. Օհանջանյանի կողմից, նրան տրվում են արտակարգ լիազորություններ։ Պառլամենտը արձակվում է և երկրում ստեղծվում է դաշնակների այսպես կոչված «Արևելյան բյուրոյի» դիկտատուրան։ Հայաստանում հայտարարվում է ռազմական դրություն, կազմակերպվում են արտակարգ դատարաններ, հատուկ լիազորներ են ուղարկվում գավառները՝ տեղերում ժողովրդական ելույթները ճնշելու համար։ Դաշնակներն սկսում են կազմակերպել կամավորական խմբեր՝ Ալեքսանդրոպոլ ուղարկելու համար։ Եվ որովհետև թշնամին այստեղից էր սպասում առաջին հարվածը, ուստի նա նպատակ է դնում սկզբից ևեթ խեղդել Ալեքսանդրոպոլի ապստամբական ուժը։

---

[1] ՀԿ(բ)Պ ԿԿ-ին կից ՊԱ, ֆ. 30, գ. 7, էջ 48—49։

[2] Ս. Վրացյան,—Հայաստանի հանրապետությունը, Փարիզ, 1928 թ., էջ 359—360։

Իրադրության այսպիսի լարված պայմաններում Արժենկովի սխալը մեր կարծիքով եղավ այն, որ նա ժամանակին ակտիվ գործողություններ չգիմեց և չստեղծեց ռազմական կենտրոն։

Մայիսմեկյան ցույցերը ավելի լարված քաղաքական մթնոլորտում ընթացան Ալեքսանդրոպոլում։ Բոլշևիկյան դրոշների տակ ցույցին մասնակցող մի քանի հազար աշխատավորներ և զինվորներ բուռն համակրանք արտահայտեցին դեպի բոլշևիկների պարտիան։ Այստեղ մասսաները ցայտուն կերպով դրսևորեցին իրենց ցանկությունը և պատրաստակամությունը՝ երկրում սովետական իշխանություն հաստատելու մասին։ Դաշնակները ցույցերի ժամանակ կատարյալ պարտություն կրեցին, ցույցի ղեկավարությունը ամբողջովին բոլշևիկները իրենց ձեռքը վերցրին և այդ բոլորը դաշնակներին սարսափեցնում էր։

Ռևոլուցիոն մասսաների կազմակերպվածությունը թուլացնելու և նրա ուժերի արագ հավախմբումը կասեցնելու նպատակով դաշնակցականները որոշում են ղլխատել շարժումը՝ մեկուսացնելով նրա ղեկավարներին։ Քաղաքային իշխանությունը որոշում է մայիսի 2-ի գիշերը ձերբակալել քաղաքի ակտիվ կոմունիստներին, սակայն այդ ծրագիրը ձախողվում է, կոմունիստները՝ խուսափելով ձերբակալություններից, կենտրոնանում են երկաթուղային կայարանում, որտեղ նրանք իրենց ապահով էին զգում։

Դաշնակները փորձում են ձերբակալել «Վարդան զորավար» զրահապնացքի հրամանատար կապիտան Մուսայելյանին, որը զրահապատի անձնակազմի գլուխն անցած, Ալեքսանդրոպոլի բոլշևիկյան կազմակերպության հետ միասին պայքարում էր դաշնակների դեմ։

ՌՍՖՍՌ Հայաստանի լիազոր ներկայացուցչության ինֆորմացիոն բյուլետենում տպագրված մի զեկուցման մեջ այդ մասին ասված է.

> «Մի խումբ միլիցիոներներ, թվով հինգ հոգի, մտան զրահապատ գնացքը, պահանջելով գնացքի պետ կապիտան Մուսայելյանից հետեել իրենց՝ միլիցիայի շտաբը։ բայց նա մերժեց սպառնալով նրանց՝ ռմբակոծել քաղաքը... և նրանք իրենց կաշվից վախենալով, առանց միջադեպի հեռացան...
>
> Վերոհիշյալ անձինք կրկին անգամ փորձեցին ձերբակալել կապիտան Մուսայելյանին, սակայն ապարդյուն»։[1]

Այդ ահաբեկման մասին ավելի ուշագրավ տողեր է գրել ինքը՝ Մուսայելյանը, Երևանի բանտից ՌԿ(բ)Պ Երկրային Կոմիտեին ուղարկած զեկուցագրում։ Այդ զեկուցագրից պարզվում է, որ դաշնակցական կառավարության գործակալները մայիսի 1-ից հետո խիստ կերպով հետապնդում էին Ալեքսանդրոպոլի բոլշևիկյան կազմակերպության ակտիվ անդամներին և այդ թվում իրեն՝ Մուսայելյանին՝ նրանց կալանավորելու նպատակով։ Երևանի կառավարությունը կարգադրում է կապիտան Մուսայելյանին զրահագնացքով ներկայանալ Երևան, նրան կալանավորելու և զրահապատը խլելու նպատակով։ Մուսայելյանը մերժում է առաջարկը։ Դաշնակները որոշում են Մուսայելյանին վերացնել մեջտեղից, պայթեցնել զրահապատը, սակայն նրանց այս մտադրությունն էլ ձախողվում է։[2]

---

[1] ՀԿ(բ)Պ ԿԿ-ին կից ՊԱ, ֆ. 30, գ. 6, էջ 15—19։

[2] Նույն տեղում, էջ 122—129։

Հիշված զեկուցագրում Մուսայելյանը գրում է, որ սկսված տեռորի հետևանքով ակտիվ բոլշևիկները ապաստան էին գտել կայարանում։ Բանվորների նկատմամբ դաշնակների կողմից կիրառվող հալածանքները և սանձարձակությունները ստեղծել էին լարված դրություն։

«Երկաթուղագործում բանվորների վերաբերմամբ,—գրում է Մուսայելյանը,—դաշնակների կողմից տեղի էին ունենում կամայականություն, անկարգություններ և սանձարձակություններ։ Բանվորների և զինվորների դժգոհությունը հետզհետե աճում էր։ Այդ կացությունը երկար տևել չէր կարող»։[1]

Մայիսի 2-ից սկսած երկաթուղային կայարանի սահմաններում դաշնակները փաստորեն զրկվել էին իշխանությունից։ Այստեղ նրանք քիչ էին երևում։ Զրահապատ գնացքը խիստ կերպով պաշտպանվում էր գնացքի անձնակազմի և բանվորների կողմից։

Մուսայելյանի կարգադրությամբ Ղամարլուից զրահավորված պլատֆորմով Ալեքսանդրոպոլ է մեկնում «Վարդան զորավար» զրահագնացքի անձնակազմի մնացած մասն էլ։

Այսպիսով, Մուսայելյանը իր բոլոր ուժերը կենտրոնացնում է Ալեքսանդրոպոլում և նախապատրաստվում է ապստամբությանը օգնելու։

«Վարդան զորավար» զրահագնացքը փաստորեն դառնում է ըմբոստացած բանվորների և զինվորների շտաբը, ուր շուրջն են համախմբվում Ալեքսանդրոպոլի ռևոլուցիոն ուժերը և սպասում ակտիվ գործողությունների ազդանշանի։ Դաղաքի կայազորի զինվորներն էլ սերտ կապ են պահպանում զրահագնացքի հետ և ապստամբության նախապատրաստման հրահանգներ ստանում նրանից։

Մուսայելյանը իր հիշված զեկուցագրում ասում է.

«Հետևյալ օրը (խոսքը մայիսի 2-ի մասին է—Հ.Կ.) կայազորի բոլոր մասերը սկսեցին ինձ պատվիրակներ ուղարկել։ Ես մեծ ոգևորությամբ ձեռնամուխ եղա նրանց կազմակերպելու և մի քանի օրվա ընթացքում հաջողեցրի կատարելապես կարգապահ մի Կարմիր Բանակ կազմակերպել»։[2]

Ապստամբությունը Ալեքսանդրոպոլում արագորեն հասունանում և անխուսափելի էր դառնում։ Դաշնակները ուզում են կասեցնել ռևոլուցիոն ուժերի արագ կազմակերպումը, և որովհետև չեն կարողանում այդ անել, ուստի դիմում են խորամանկությունների և պրովոկացիաների։ Փորձում են կտրել մասսաներից ղեկավարներին, մասնավորապես Մուսայելյանին։

Կառավարությունը ներկայացուցիչներ է ուղարկում Մուսայելյանի մոտ նրան համոզելու, որ նա հեռանա ռևոլուցիոն մասսաներից, բոլշևիկյան պարտիայից։ Այս փորձերն էլ անցնում են ապարդյուն։ Նույնպիսի փորձ են անում դաշնակները Մուսայելյանի նկատմամբ նաև իշխանությունը գրավելու օրը՝ մայիսի 10-ին, այս անգամ էլ դաշնակները կտրուկ մերժում են ստանում։

Դաշնակների նոգկալի քաղաքականությունը չէր սահմանափակվում ապստամբության ղեկավարությունը գլխատելու ծրագրով։ Համոզվելով այն

---

[1] ՀԿ(բ)Պ ԿԿ-ի կից ՊԱ, ֆ. 30, գ. 6, էջ 122—129։

[2] Նույն տեղում։

բանում, որ չեն կարող բացարձակ կռվի դուրս դալ բանվորների, զինվորների և մյուս աշխատավորների դեմ, դաշնակները փորձում են պրովոկացիայի միջոցով քայքայել ռևոլուցիոն ուժ։ Այդ նպատակով կազմակերպում են պետական պահեստների թալան, մթերքները բաժանում են սպեկուլանտներին և դաշնակ թափթփուկներին։ Ամերիկյան Կոմիտեն դադարեցնում է իր գործունեությունը և որոշում է հեռանալ Ալեքսանդրոպոլից, և այլն։ Այս բոլորը արվում էր այն նպատակով, որպեսզի դժգոհություն սերմանվի քաղաքի աշխատավորության մեջ, խուճապ առաջանա և այդ վերադրվի բոլշևիկների և ռևոլուցիոն մասսաների հանդեպ կառավարության բռնած գիրքին։ Սրելով պարենային ծանր դրությունը՝ դաշնակները ցանկանում էին այն օգտագործել հասունացող ապստամբության դեմ։

Հաշվի առնելով դաշնակների ձեռնարկած տեռորիստական և պրովոկացիոն միջոցառումները ընդդեմ ռևոլուցիոն բանվորների և գյուղացիների, ընդդեմ բոլշևիկյան կազմակերպության և զրահագնացքի անձնակազմի, անձամբ Մուսայելյանի, զրահագնացքի հրամանատարությունը և բոլշևիկյան կազմակերպության ղեկավարությունը մայիսի 2-ից իրենց ուժերը կենտրոնացնում են և հավարում պատերազմական դրության մեջ։

Այդ մասին կապիտան Մուսայելյանը իր վերևում հիշված զեկուցագրում դրում է.

«Ես այդ բոլորի մասին նախազգուշացված լինելով, արտակարգ պատերազմական միջոցներ ձեռք առա և դեպքերի ընթացքով իսկ դաշնակ կառավարության հանդեպ կանգնեցի պատերազմական դրության վրա»։[1]

Մայիսի 4-ից սկսած երկաթուղային կայարանը և նրա շրջակայքը փաստորեն կոմունիստների ձեռքումն էր։ Քաղաքի ամբողջ կայազորը, բացի սպայական կազմի որոշ մասից, կողմնորոշվել էր դեպի ապստամբությունը։

Կայազորի զինվորների ռևոլուցիոն տրամադրությունների և Սովետական իշխանության համար պայքարելու նրանց պատրաստականության մասին խոստովանում էր ինքը՝ թշնամին։ Ալեքսանդրոպոլ ուղարկված կառավարական «հատուկ հանձնաժողովի» անդամ գնդապետ Ա. Շահմաղյանը, ապստամբությունից մի քանի օր հետո «Հառաջի» թղթակցին հետևյալն է հաղորդել։

«Մայիսի 8-ին գնացինք Բերդ. այնտեղ էին զրահապատ գնացքից եկած զինվորա-հեղափոխական կոմիտեի անդամներից շատերը։ Զուզեցինք ճառեր խոսել, միտինգի բնավորություն չտալու համար, այլ երկու խմբի բաժանված՝ մի կողմը ես, մյուս կողմը Սասունին, խոսեցնել էինք ուզում զինվորներին։—Ոչ մի պատասխան չենք տալու ձեր հարցերին, քանի դեռ մնում է ներկա կառավարությունը։ Երկու տարի է մենք պահանջներ ենք ներկայացնում շարունակ և այդքան ժամանակամիջոցում մեր պահանջներից ոչ մեկը չի բավարարված։ Մենք ձեզ չենք ուզում լսել, մենք ուզում ենք լսել մեր զինվոր ընկերներին։ Այդ աղաղակից հետո մի զինվոր բարձրացավ մի բարձր

1 ՀԿ(բ)Պ ԿԿ ՊԱ, ֆ. 30, գ. 6, էջ 128—129։

տեղ և սկսեց խոսել։ Այդ իրառնուկ խոսակցությունը մի վայրկյանում միտինգի վերածվեց։ Նկատելի էր խիստ կարգապահություն։ Խոսողը դրվատեց բոլշևիզմից սպասվող բոլոր բարիքները և այդ բոլորի մեջ Նրանից սպասվող համաշխարհային խաղաղությունը։ — Մենք կարող ենք խաղաղություն բերել բոլորին, ինչպես ե հայ ժողովրդին։ Այդ խոսքերի վրա՝ կեցցե Սովետական Իշխանությունը, կորչի դաշնակցությունը — աղաղակը թնդացրեց օդը...»[1]։

Այսպիսով, բանակի զինվորները պատրաստ էին կռվել դաշնակների դեմ հանուն սովետական կարգերի։

Ապստամբության կողմն էր նաև քաղաքի միլիցիայի կազմը, որը մայիսի 9 ին պատրաստակամություն հայտնեց իր ուժերը ամբողջովին դնելու Ռազմա-հեղափոխական Կոմիտեի տրամադրության տակ։

Բանվորները սկսում են զինվել։ կազմակերպվում է բանվորական գվարդիա։

Բերված փաստերը ցույց են տալիս, որ կոմունիստների դրոշի տակ էր Ալեքսանդրոպոլի ողջ բանվորությունը, քաղաքի ամբողջ կայազորը՝ իր հրամանատար գեներալ Թաչատուրովի հետ միասին։ Կայազորի ավանգարդում էին հեծյալ գնդերը իրենց հրամանատարական կազմով, որոնց ներկայացուցիչները արդեն իրենց հավատարմությունն էին հայտնել առաջին իսկ պահանջի դեպքում կրծքով պաշտպանել Սովետական իշխանությունը։ Մայիսի 6-ից քաղաքի և նրա շրջակայքի հսկողությունը հեծգնդերը իրենց ձեռքն էին վերցրել։

Տաղաքում տեղի ունեցած դեպքերը արձագանք են գտնում շրջապատի գյուղերում, ամենից առաջ Տավթաղլուի շրջանում, որտեղ աշխատավորները, հետևելով բանվորներին և զինվորներին, կոմունիստների ղեկավարությամբ, նախապատրաստվում էին դարպացող դեպքերը կազմ ու պատրաստ դիմավորելու համար։

Հաշվի առնելով այս բոլորը, Ալեքսանդրոպոլի կազմակերպության ղեկավարությունը և զրահապատի ղեկավարությունը որոշում են գրավել իշխանությունը։ Նրանք այն կարծիքին էին, որ իշխանության գրավման համար անհրաժեշտ նախապայմաններ արդեն կան, միայն բացակայում է Հայաստանի կոմունիստական պարտիայի կենտրոնի՝ Արմենկոմի սանկցիան։ Մայիսի 3-ին, 5-ին և 6-ին Արմենկոմին ուղարկված նամակներով Ալեքսանդրոպոլի կազմակերպությունը ապստամբության սանկցիա է պահանջում։

Արմենկոմը սանկցիա չի տալիս։ Իր այդ դիրքը նա պատճառաբանում է նրանով, որ ալեքսանդրոպոլցիները պատրաստ չեն իշխանությունը գրավելու և այն իրենց ձեռքում պահելու, ինչպես նաև նրանով, որ Հայաստանի մյուս շրջանների ելույթների հետ չհամաձայնեցված գործողությունների հետևանքով անխուսափելիորեն ուժերը կցլատվեն։

Առարկելով Ալեքսանդրոպոլի կազմակերպության կոմիտեի հավաստիացումներին, Արմենկոմը Երկրային Կոմիտեին ուղարկած իր գեկուցագրում ասում է.

«...Մենք հավատացած էինք, որ այդ բոլորը չափազանցված է...

[1] «Հառաջ», 1920 թ. մայիս, № 108։

Դեռ ավելին, մենք հավատացած էինք, որ նրանց (ալեքսանդրոպոլցիների—Հ.Կ.) հաջողությունը չի կարող կայուն լինել, որ անհրաժեշտ է ամենուրեք համաձայնեցնել մեր գործողությունները, քանի որ անջատ ելույթները փոշիացման և պարտության կհասցնեն, որ անհրաժեշտ է բոլոր շրջանների հետ կապ հաստատել և այլն։[1]

Այնուհետև՝ հաշվի առնելով Ղազախի (Իջևանի) Սովետական Ազրբեջանին սահմանամերձ լինելու հանգամանքը և Կարմիր Բանակի կողմից սպասվող օգնության անհրաժեշտությունը, Արմենկոմը որոշել էր, որ ապստամբություն սկսելու ազդանշան տվողը լինի Ղազախը։

Կասկածից դուրս է, որ ապստամբության արագ և վերջնական հաղթանակը Հայաստանում, պահանջում էր, եթե ոչ ամբողջ, գոնե հիմնական շրջանների ապստամբական ուժերի գործողությունների միասնություն, որն ստեղծելու համար Արմենկոմը ժամանակին չցուցաբերեց պահանջվելիք օպերատիվություն և ձեռներեցություն։ Նա դանդաղեց ապստամբական գործողությունների ղեկավարման նախաձեռնությունը իր ձեռքը վերցնելու գործում։ Արմենկոմը մինչև մայիսի 6—7-ը փաստորեն վարանման մեջ էր և վճռական քայլեր չէր անում ապստամբության նախապատրաստումը գլխավորելու համար։

Ալեքսանդրոպոլի կազմակերպության պահանջով և նրա ձնշման տակ, մայիսի 6-ին Արմենկոմը Ալեքսանդրոպոլ է ուղարկում իր ներկայացուցիչներին, լայն լիազորություններ տալով նրանց և պարտավորեցնելով, «որ եթե չի կարելի կասեցնել ապստամբությունը, որ անհրաժեշտորեն պետք էր անել, ապա միաժամանակ կապվել Ղարաքիլիսայի շրջանների, Զեզոք գոտու և հարակից շրջանների հետ»։

Ահա այս դիրեկտիվներով Արմենկոմի ներկայացուցիչները մասնակցում են Ալեքսանդրոպոլի կազմակերպության ակտիվի մայիսի 7-ի նիստին, որտեղ բազմակողմանիորեն քննության է առնվում ստեղծված դրությունը, իշխանության գրավման հետ կապված դժվարությունները և որոշում են սկսել ապստամբությունը։ Նիստին մասնակցում էին նաև Կարսից՝ Ղ. Ղուկասյանը, Սարիղամիշից՝ Ա. Ճուղուրյանը և ուրիշները, որոնք դիրեկտիվ են ստանում՝ ապստամբության համար անմիջական ձեռնարկումների դիմելու մասին։ Կազմվում է Հայաստանի ռազմա-հեղափոխական կոմիտե, նշվում է նաև Դիլիջանի և Կարսի ռազմա-հեղափոխական կոմիտեների կազմը։ Առանձնացվում է կառավարության կազմ, կատարվում են մի քանի աշխատողների նշանակումներ պատասխանատու պոստերում, մշակվում է գործողությունների պլան, ըստ որի պետք է ապստամբեին նաև Կարսը, Սարիղամիշը, Լոռին և Ղազախը, Ռազմա-հեղափոխական Կոմիտեի հատուկ հրահանգից հետո։

Այսպես, Ալեքսանդրոպոլում կազմված Հայաստանի Ռազմա-հեղափոխական Կոմիտեն մայիսյան ապստամբության նախաձեռնությունը և ղեկավարությունը իր ձեռքն է վերցնում։

Մինչև մայիսի 10-ը, ապստամբության օրը, Ալեքսանդրոպոլում փաստորեն ստեղծվել էր երկիշխանություն։ Իշխանությունը դեռևս լրիվ չափով

[1] ՀԿ(բ)Գ ԿԿ ին կից ՊԱ, ֆ. 30, գ. 7, էջ 30։
[2] Նույնը, էջ 33։

ապստամբների ձեռքում չէր գտնվում։ Չնայած դաշնակները մայիսի 5-ից արդեն դադարել էին դրության տերը լինելուց, բայց քաղաքում դեռ դաշնակների պետական մարմինները իրենց գոյությունը պահպանում էին։

Մայիսի 3-ին դաշնակցական կառավարությունը առաջարկում է Մուսայելյանին՝ դրահապատով ներկայանալ Երևան, «մի ինչ որ օպերացիայի համար», բայց Մուսայելյանը կարականապես հրաժարվում է ասելով, թե նա կառավարությանը չի ենթարկվում։[1]

Մայիսի 6-ին ենթասպա Եվանգուլովի Ալեքսանդրոպոլ մեկնելուց հետո, գեներալ Շելկովնիկովը նրան առաջարկում է անմիջապես վերադառնալ ռազմաճակատ, այսինքն՝ Ղամարլու։ Այդ առաջարկին Եվանգուլովը պատասխանում է, թե «Ալեքսանդրոպոլ է եկել Ռուսաստանի Կոմունիստական Կուսակցության հրամանով։ Ալեքսանդրոպոլում կարգ հաստատելուց հետո անմիջապես կմեկնի ռազմաճակատ»[2]։

Ղամարլույում կանգնած «Ազատամարտ» գրահապատի հրամանատարին Մուսայելյանի կողմից արված առաջարկությունը՝ ապստամբությանը միանալու մասին, նույն հրամանատարի կողմից մերժվում է։ Վերջինս այդ մասին հայտնում է կառավարությանը, որից հետո գրահապատի անձնակազմի մեջ լարված դրություն է ստեղծվում։ Չնայած գրահապատի հրամանատարության այս դիրքին, նրա անձնակազմը հիմնականում ապստամբ «Վարդան զորավարի» կողմն էր։ Հաշվի առնելով «Ազատամարտ» գրահապատի անձնակազմի տրամադրությունները, որի վրա բոլշևիկները մեծ ազդեցություն ունեին, կառավարությունը որոշում է կտրուկ միջոցներ ձեռք առնել գրահապատի անձնակազմի դեմ, եթե վերջինս ակտիվ գործողությունների դիմի, կանգ չառնելով այդ անձնակազմի ոչնչացման առաջ, եթե այդ անհրաժեշտ լինի։[3]

Մայիսի 8-ին դաշնակցականները Ալեքսանդրոպոլում կազմակերպում են միտինգ և հավաքված առևտրականներին, շովինիստական ու մաուզերիստական տարրերին հրահրում են հարձակում գործելու երկաթուղային կայարանի վրա՝ ապստամբ գրահապատը գրավելու համար։ Ամբոխը շարժվում է դեպի կայարան և հավաքվում է այսպես կոչված դեզերտիրսկի բազարում։ Այդ տեսնելով, բանվորները խմբվում են գրահապատի շուրջը և երգում Ինտերնացիոնալ։ Դաշնակցականները ուժ գործադրելու մտքից հրաժարվում են։ Ամբոխից առանձնանում է մի խումբ գրահապատի հրամանատարի հետ բանակցելու համար։ Մուսայելյանը նրանց չի ընդունում, պահանջելով անմիջապես հեռանալ կայարանից։ Ամբոխը դաշնակցականների գլխավորությամբ, առանց որևէ հաջողության, գլխիկոր հեռանում է կայարանից։ Նույն օրը կառավարության հրահանգով Ալեքսանդրոպոլ եկած հանձնաժողովը փորձ է անում համոզել Մուսայելյանին՝ ենթարկվելու կառավարությանը, սակայն զուր են անցնում նաև այս փորձերը։ Մուսայելյանը իր դրահագնացքի անձնակազմով անվերապահորեն կանգնած էր Հայաստանում սովետական իշխանություն հաստատելու տեսակետի վրա։ Նա այդ համարում էր հայ ժողովրդի փրկության միակ ելքը։ Հանձ-

1 ՀԿ(բ)Պ ԿԿ-ին կից ՊԱ. ֆ. 80, ց. էջ 16։
2 ЦГА Арм. ССР, ф. 68/200, д. 842, стр. 6—7.
3 Նույնը, д. 772, стр. 7.

նաժոդովը, դրանից հետո այցելում է բերդը՝ կայազորի զինվորներին և սպայական կազմին համոզելու, որ անցնեն կառավարության կողմը, բայց այդտեղ նույնպես նա ոչ մի դրական արդյունքի չի հասնում։ Ընդհակառակը, նա համոզվում է, որ զինվորները պատրաստ են դաշնակների տիրապետությունը տապալելու, նրանց վերջին խոսքն է եղել «կորչեն դաշնակցականները, կեցցե Սովետական իշխանությունը»։

Մայիսի 9-ին զրահապատի վրա ծածանվում էր կարմիր դրոշը։ Կայարան են հավաքվում բանվորների խմբերը, կայազորի զինվորները և միլիցիան։ Տեղի է ունենում միտինգ, որը տապալված է հայտարարում դաշնակների տիրապետությունը և Հայաստանը հայտարարում Սովետական։ Նույն օրը փոքրաթիվ զինված ուժով Ռեկոմը փորձ է անում տիրել Գաղչի պոստին, այստեղ կենտրոնացած պահեստները թալանից փրկելու նպատակով։

Մայիսի 10-ին, առավոտյան, Ռազմա-ռևոլուցիոն Կոմիտեն վերջնագիր է ներկայացնում Ալեքսանդրոպոլի քաղաքային վարչությանը՝ մինչև ժամը 4-ը քաղաքը առանց դիմադրության հանձնելու մասին։ Ռազմա-ռևոլուցիոն Կոմիտեի այդ առավոտ հրատարակած հայտարարության մեջ ասված է.

«...Զքավոր գյուղացիության, բանվորների և Կարմիր զորքի կամքով Հայաստանի կոմունիստական կուսակցության Ռազմա-հեղափոխական Կոմիտեն Հայաստանի ռեսպուբլիկայի մեջ հռչակում է սովետական իշխանություն։ Այս օրվանից մաուզերիզմի, խմբապետների, սպեկուլանտների վրա հենված և բռնության, կողոպուտի ինքնիշխանության վրա հիմնված դաշնակների կառավարությունը տապալված է։ Ռազմա-հեղափոխական Կոմիտեն կոչ է անում երկրի աղքատաբնակչությանը պահպանել հեղափոխական դիսցիպլինա և կարգ, ստեղծագործական աշխատանքի խանգարման ամեն մի փորձ կխեղդվի իր բնում խորհրդային Հայաստանի կարմիր զորքերի կողմից»։[1]

Այնուհետև, նույն հայտարարության մեջ, քաղաքում նորմալ դրություն ստեղծելու խնդրին նվիրված ութ կետերում Ռեկոմը սահմանում է պատերազմական ժամանակի մի շարք միջոցառումներ ու հասարակական և պետական հիմնարկների անարյուն անցումը սովետական իշխանության ձեռքը ապահովելու համար ...որպես պատանդ՝ պահանջում է իր մոտ մի շարք դաշնակցական գործիչների։

Քաղաքը առանց դիմադրության հանձնելու մասին քաղաքային վարչությանը ներկայացված վերջնագրի պատասխանը Ռեկոմը սպասում էր մինչև ժամը 4-ը, նախազգուշացնելով, որ «հակառակ դեպքում նա (քաղաքը—Հ.Կ) կենթարկվի ռմբակոծման»։[2]

Քաղաքային վարչությունը այս ու այն պատրվակի տակ, հետաձգում է իր պատասխանը,[3] և որոշ ձգձգումներից հետո հայտնում է, որ վարչությունը լիազորված չէ կատարելու Ռազմա-ռևոլուցիոն Կոմիտեի

---

[1] ՀՍՍՌ Գիտ. Ակադեմիա, Պատմության ինստիտուտի արխիվ, գ. 102, թերթ 170։
[2] Նույն տեղում։
[3] ՀԿ(բ)Պ ԿԿ ին կից Պարտ. արխիվ, Ֆ. 30, գ. 6, էջ 18—19։
[4] Նույն տեղում։

պահանջը։ Մինչ այդ քաղաքը շրջապատվում է կայտզորի զորամասերով։ Օրվա ընթացքում առանց դիմադրության զորքը գրավում է Կաղաչի պոստը։ Քաղաքը հանձնելու վերաբերյալ քաղաքային վարչության բացասական պատասխանից հետո, Ռեկոմը զինված ուժին հրաման է տալիս մտնել քաղաքը։

Ռազմա-ռևոլուցիոն Կոմիտեն մայիսի 10-ին մի կոչով դիմում է քաղաքացիներին, որի մեջ ասված է.

«Ընկերներ և քաղաքացիներ.

Դաշնակցական հակահեղափոխական կառավարության օրերը հաշվված են։ Կարմիր զորքերը և բանվորությունը արդեն գրավել են Կարսը և Ալեքսանդրոպոլը, պահանջելով դավաճան կառավարությունից հանձնել իշխանությունը հեղափոխական պրոլետարիատին և Կարմիր Բանակին։ Այժմ քաղաքում դաշնակցականները գլուխը կորցրած հոգեվարքի վերջին փորձերն են անում, որպեսզի խաղաղ քաղաքացիներին գրգռեն զորքի և բանվորության դեմ, առաջ բերելու եղբայրասպան կռիվ։ Զինվորա-հեղափոխական կոմիտեն հենվելով Հայաստանի բանվորների, գյուղացիների և զինվորների կամքի վրա, դաշնակցական կառավարության այդ պրովոկացիոն քայլերին հակադրում է այն համակրանքը, որ քաղաքացիները ցույց են տալիս դեպի նոր և երջանիկ Սովետական Հայաստանը...

Զինվորա-հեղափոխական կոմիտեն հայտարարում է, որ շուտով քաղաք պիտի մտնի Կարմիր Բանակը, ապահովելով քաղաքացի՛սերի կյանքն ու գույքը թե արտաքին և թե ներքին թշնամիներից։

Դիմադրության, թալանի, կյանքի բնական ընթացքի խանգարման ամեն մի փորձ կենթարկվի ամենախիստ պատժի Հեղափոխական Տրիբունալի կողմից»։[1]

Մայիսի 10-ին, օրվա երկրորդ կեսին քաղաք են մտնում՝ բանվորական գվարդիայից մի ջոկատ, հեծգնդից մի դասակ և միլիցիան, որոնք գրավում են պահեստները, փոստ-հեռագրատունը, բանկը և պետական մյուս հիմնարկները։ Զինված ուժերի մուտքը քաղաք՝ ստիպում է հակառակորդին նույն օրվա վերջին, երկաթուղային կայարան ուղարկել իր ներկայացուցիչներին՝ քաղաքը հանձնելու և Ռազմա-ռևոլուցիոն Կոմիտեի իշխանությունն ընդունելու վերաբերյալ պաշտոնական հայտարարություն անելու համար։

Ապստամբ ուժերի ականավոր ղեկավարներից մեկի՝ Բ. Ղարիբջանյանի գլխավորությամբ Ռազմա-ռևոլուցիոն Կոմիտեի ներկայացուցիչները անմիջապես կնքում են քաղաքում եղած բոլոր պահեստները, կազմակերպում հսկողություն և ձեռնամուխ լինում կարգ ու կանոնի հաստատմանը։ Այսպիսով, մայիսի 10-ին առանց դիմադրության, բացի բանկի մոտ տեղի ունեցած աննշան հրացանաձգությունից, իշխանությունն Ալեքսանդրոպոլում անցնում է ապստամբների ձեռքը։

Ալեքսանդրոպոլում տեղի ունեցած քաղաքական դեպքերը, դեռևս մայիսի 10-ից էլ առաջ, իրենց անմիջական ազդեցությունն են ունենում քաղաքի մոտակա գյուղերում։ Տավթաուլի շրջանի աշխատավորները առաջինն են արձագանքում քաղաքի բանվորների և զինվորների պայքա-

[1] ՀԿ(բ)Կ ԿԿ-ին կից ԿԱ, ֆ. 80, գ. 9, էջ 27։

րին։ Այստեղ մայիսի 1-ից սկսած կոմունիստները ակտիվորեն միջամտում էին շրջանի պետական և հասարակական գործերին։ Գյուղացիները բազմաթիվ հարցերով դիմում էին ոչ թե շրջանի դաշնակցական կոմիսարին, այլ բոլշևիկ Փանյանին։ Քավթառու գյուղը աստիճանաբար փոխարինում է շրջանի կենտրոն հանդիսացող Նորաշենին։ Շրջանում իշխանության գրավումը օրվա հարց է դառնում։

Քավթառուի գյուղերում դրությունը ավելի է լարվում, երբ դաշնակցական ղեկավար մարմինները որոշում են շրջանում ստացված սերմացուն ետ տանել։ Դաշնակների այդ մտադրությունը աշխատավորների լայն խավերի մեջ խիստ դայրույթ է առաջացնում. գյուղացիները տարբերյանորեն պայքար են սկսում պետական մարմինների այդ որոշման դեմ։ Տեղական կոմունիստական կազմակերպությունները, բնական է, որ չէին կարող դիտողի դերում մնալ, ուստի նրանք սկսվող պայքարին կազմակերպված բնույթ տալու համար գործնական միջոցառումների են դիմում և արգելում են սերմացուն ետ տանելու մասին դաշնակցականների որոշման կատարմանը։ Այդ նպատակով հրավիրվում է կոմունիստական կազմակերպությունների և չքավոր գյուղացիների «միացյալ խորհրդակցություն, որտեղ որոշվում է գրավել պահեստները և սերմացուն բաժանել չքավորներին։ Խորհրդակցությունը առանձնացնում է մի մարմին, որին և հանձնարարում է գլխավորել որոշման կենսագործումը։ Ընտրված մարմնի ղեկավարությունը հանձնվում է բոլշևիկ Փանյանին, որը առանց հապաղելու, կարգադրում է կազմել չքավորների ցուցակները և սկսել սերմացուի բաշխումը։ Քավթառուի շրջանի աշխատավորների և կոմունիստների այդ ձեռնարկումը ձախողելու նպատակով դաշնակցական-կուլակային տարրերը դիմում են վարչական միջոցների՝ ցանկանում են միլիցիայի միջոցով կանխել սերմացուի բաշխումը, սակայն միլիցիան հրաժարվում է կատարել այդ մասին տրվող կարգադրությունը։

Մայիսի 8-ին Քավթառուում կազմակերպվում է շրջանային Ռեկոմ, որի նախագահ է ընտրվում Ա. Փանյանը։ Մինչև մայիսի 10-ը Ռեկոմը կազմակերպում է իր զինված ուժերը. ստեղծվում են կարմիր ջոկատներ, որոնց օգնությամբ մայիսի 10-ից ձեռնարկվում է կոնտրռեոլուցիոն տարրերի զինաթափման աշխատանքը։

Քավթառուի շրջանում իշխանության կազմակերպումը ղեկավարում էր իսկական ռեոլուցիոներ Ա. Փանյանը։ Նա աղքատ գյուղացիներին սերմացու է բաժանում։ Նա «զենքի, ձիերի, տավարի, պարենի հաշվառում կատարեց և շրջանը մաքրեց հակահեղափոխական բանդաներից...»։[1]

Մայիսի 10-ին, վաղ առավոտյան, Հայաստանի Ռազմա-ռևոլուցիոն Կոմիտեն գրավոր դիրեկտիվ է տալիս Քավթառուի Ռեկոմին՝ անմիջապես գրավել իշխանությունը։ Նույն օրը շրջանում հաստատվում է Սովետական իշխանություն։

Քավթառուի շրջանի աշխատավորները Սովետական իշխանության հաստատման լուրը ընդունում են մեծ խանդավառությամբ։ Բազմաթիվ գյուղերում չքավորներն ինքնակամ մտնում են կարմիր ջոկատների շարքերը և կոմունիստների հետ միասին ակտիվորեն պայքարում կոնտրռևո-

[1] ՀԿ (բ) ԿԿԷԿԻ ՊԱ. ֆ. 50, գ. 6, թ. 15—19։

լուցիայի դեմ։ Մայիսի լույս 11-ի գիշերը գյուղացիների գինված ջոկատները, կոմունիստների ղեկավարությամբ, սկսում են դաշնակցական կուլակային տարրերի գինաթափման մասսայական գործը։

Մայիսյան ապստամբության մասնակիցներից Գալոյանը Փոքր Պարնի գյուղից իր հիշողություններում գրում է.

«... Գիշերը սկսեցինք գինաթափումը, որը շարունակվեց մինչև հետեյալ օրը։ Զինված չքավորության հետ շրջելով գյուղում, հավաքեցինք բոլոր զենքերը...

Գյուղի ամենամեծ շենքի ծայրին բարձրացրինք կարմիր դրոշակը, իսկ գյուղում եղած սերմացուի ֆոնդը — մոտ 400 փութ ալյուրը բաժանեցինք չքավորությանը։ Զինված ապստամբներին հավաքել էինք մի տեղ և... հաճախ գինված խմբերով դուրս էինք գալիս դիմադրում գյուղի կամ շրջանի գյուղերի վրա հարձակվող դաշնակ հրոսակախմբերին»։

Պարտություն կրելով քաղաքում, դաշնակները փորձում են ամրանալ գյուղում՝ այն իրենց հենարան դարձնելու և Ալեքսանդրոպոլի դեմ պայքարելու նպատակով։ Մայիսի 10-ին քաղաքացիներին ուղղված Ռազմա-ռեոլուցիոն Կոմիտեի կոչում ասված է.

«Դաշնակցական կառավարության ագենտները, հույսերը կտրած, քաղաքից փախչում են գյուղերը, որպեսզի մութ մթնոլորտի մեջ իրագործեն իրենց նենգ դավերը, բայց գյուղացու բռունցքը ես կը-ծանրանա նրանց գլխին»։

Դաշնակցականները ոչ միայն գործադրում են անհատական տեռոր (նրանք մահափորձ են կատարում գեներալ Խաչատուրովի դեմ, մայիսի 9-ին Գավթաղլուում սպանում են մի գյուղացու և այլն), այլև մայիսի 12-ին փորձում են գինված ուժով տիրել Դավթաղլուին, սակայն պարտվելով ետ են շպրտվում։ Շրջանի գինված գյուղացիությունը մեծ ոգեորությամբ ոչ միայն ետ է մղում թշնամուն, այլև հետապնդում է նրան։[1]

Ալեքսանդրոպոլի գավառի բաղմաթիվ գյուղերի, մասնավորապես երկրորդ գավառամասի աշխատավորները, այսպիսով, իրենց ակտիվ ապստամբական գործով ռևոլուցիոն-քաղաքական համերաշխություն ցուցաբերեցին դեպի ապստամբ բանվորներն ու գինվորները և նրանց հետ միասին, կոմունիստական պարտիայի գլխավորությամբ, անողոք պայքար մղեցին աշխատավորների ընդհանուր թշնամու դաշնակցականների անարգ տիրապետությունը տապալելու համար։

Մայիսի 10-ին հաղթական ապստամբություն է տեղի ունենում Կարսում։ Բաղաքի բանվորները և կայազորի գինվորները, բոլշևիկների ղեկավարությամբ, տապալում են դաշնակների իշխանությունը։ Իսկ մայիսի 10 ին սովետական կարգեր են հաստատվում Սարիղամիշում։ Մի երկու օրից ապստամբության փորձ է կատարվում Կաղզվանում։

---

[1] Դաշնակների օրոք ալյուրը փոխում էին սերմացու հացահատիկի հետ, այդ իսկ պատճառով հիշված ալյուրը կոչվում է սերմֆոնդ։

[2] Հ(բ)Կ ԿԿ ին կից ՊԱ, ֆ. 30, գ. 5, թերթ 50—51։

[3] Նույնը, գ. 9, թերթ 27։

[4] Նույնը, գ. 5, թերթ 51։

Մայիսի 10-ին, գիշերվա ժամը 12-ին, ուղիղ հեռագրալարով, դաշնակցական կառավարության հանձնարարությամբ գեներալ Գամազովը խոսակցություն է ունենում Մուսայելյանի հետ և աշխատում է համոզել Մուսայելյանին՝ ենթարկվել կառավարությանը։ Նա աշխատում է ահաբեկել Մուսայելյանին «թշնամիների կողմից Հայաստանին սպառնացող» վտանգով։[1]

Իր պատասխանում Մուսայելյանը ասում է.

«... Կոմունիստական կուսակցության խորին համոզմունքով հայ աշխատավոր գյուղացիության և բանվորության փրկությունը ներկա մոմենտում կայանում է միայն խորհրդային իշխանություն հաստատելու մեջ։ Ես հավատում եմ, որ դաշնակցական կառավարության ժամանակ իսկապես մեր հարևանները կարշավեն Հայաստանի վրա և այն ժամանակ մենք ոչ ոքից ոչ մի օգնություն սպասել չենք կարող։ Միակ ժողովուրդը, որը կարող է մեզ փրկել, դա ռուս հեղափոխական պրոլետարիատն է։ Մեզ լավ հայտնի է, որ ռուսական խորհրդային իշխանությունը ոչ ոքի չի թողնի վնասելու հայ աշխատավոր ժողովրդին, եթե այդ ժողովուրդը վճռականորեն կխզի իր կապերը դաշնակցական կառավարության հետ։

... Հայաստանի բոլոր բանվորները, Հայաստանի ամբողջ չքավոր գյուղացիությունը և զինվորները դաշնակցական կառավարության դեմ են։ Ես դժվարությամբ եմ պահում զորքի ընդվզումը, որի ոգին, դիսցիպլինան ամեն գովասանքից վեր է։

Կարմիր Բանակը իր կարմիր սպայության հետ միասին միշտ պատրաստ է իր կրծքով պաշտպանել Հայաստանի աշխատավոր ժողովրդին, երբ անհրաժեշտ լինի՝ նա համարձակ կգնա կռվի, միայն խորհրդային Հայաստանի կարմիր դրոշի ներքո։ Թող չջանան շուռ տալ պատմության անիվը, թող չփորձեն կանգնեցնել դեպքերի բնական ընթացքը. դաշնակցական կառավարության երգը արդեն երգված է, և մենք կոչ ենք անում երկրի բոլոր կենդանի ուժերին՝ համախմբվել կարմիր դրոշների շուրջը և դուրս բերել բազմաչարչար հայ աշխատավոր ժողովրդին ողբերգական վիճակից, որ ստեղծել են դաշնակները։

... Մի քանի օրից պրոլետարական հեղափոխության կարմիր դրոշը ծածանվելու է դաշնակների մեռած պառլամենտի վրա։ Եթե իրենց ուժեղ են զգում, թող դիմադրեն»։[2]

Մայիսի 10—11-ին կոնտրռևոլյուցիան կրում է պարտություն, սակայն մինչև վերջը չի ջախջախվում։ Ալեքսանդրապոլում և Կարսում հակառակորդի նկատմամբ ցուցաբերվում է մեղմ մոտեցում։ Ալեքսանդրապոլի Ռազմա-ռևոլյուցիոն կոմիտեն և պարտիական կազմակերպության ղեկավարները մոռանում են Մարքսի և Էնգելսի այն ճշմարտացի դրույթը, որ «ռևոլյուցիայի, ինչպես և պատերազմի մեջ, անհրաժեշտ է միշտ եռանդուն կռվել թշնամու դեմ, և առավելությունը միշտ հարձակվողի կողմն է»։[3]

Սովետական կարգերի հաստատումից հետո Ռևկոմը պետական հիմնարկներ գրավելուց ու մի քանի հիմնական պաշտոններում իր ներկայա-

---

[1] ՀԿ(բ)Պ ԿԿ ին կից ՊԱ, ֆ. 15, ց. 1, էջ 42—43։

[2] Նույնը։

[3] Կ. Մարքս և Ֆ. Էնգելս — «Ռևոլյուցիան և կոնտրռևոլյուցիան Գերմանիայում», Հայպետհրատ, Երևան, 1941 թ. էջ 99։

ցուցիչներին նշանակելուց հետու չգնացի։ Իսկ ապստամբության նվաճումների զարգացման և սովետական կարգերի ամրացման անհրաժեշտությունը պահանջում էին առանց հապաղման, վճռական պայքար սկսել թշնամու դեմ իր իսկ թիկունքում՝ Ալեքսանդրոպոլում, Կարսում և շրջակա գյուղերում։ Սովետական իշխանության դեմ հակառակորդի անխուսափելի ոտնձգությունները կանխելու համար անհրաժեշտ էր ամենայն վճռականությամբ մեկուսացնել և ջախջախել կոնտրռևոլուցիան, ձեռնարկել հին պետական ապարատի ջախջախմանը և նրա փոխարեն ստեղծել նոր սովետական ապարատ։ Այս առաջնահերթ, հաղթանակն ամրացնող խնդիրներով զբաղվելու փոխարեն Ռեկոմը բռնեց դիջումների և բանակցությունների ուղին։ Քաղաքի կոմիսար Ռ. Ղարիբջանյանի ղեկավարությամբ ու ցուցումով մայիսի 11-ին ձերբակալված մի քանի դաշնակ գործիչներ հաջորդ օրը Արմենկոմի ներկայացուցիչ և Ռևկոմի անդամ Ա. Մելքոնյանի կարգադրությամբ ազատ են արձակվում։ Ռեկոմը նույնպիսի կարգադրություն է անում նաև Կարսում մեկուսացված երեք դաշնակցական գործիչների մասին։ Ավելին. Ռազմա-ռևոլուցիոն կոմիտեն Կարսի Ռևկոմի միջոցով պահանջում է Կարսի կայազորի հրամանատարությունից և պաշտոնյաներից ընդունել Սովետական իշխանությունը, մնալ իրենց տեղերում և շարունակել աշխատանքը։ «Բոլոր հիմնարկներին և կազմակերպություններին,— գրում էր Ռևկոմը իր մայիսի 10-ի հայտարարության մեջ,—շարունակել սովորական գրաղմունքը, ծառայողներին՝ մնալ իրենց տեղերում...»[1]

Ռևկոմի այսօրինակ մեղմ քաղաքականությունը հետևանք էր նրա մի քանի անդամների սխալ, օպորտունիստական ոգի. որոնք հնարավոր էին համարում անարյուն ապստամբություն կատարել և իշխանությունը նվաճել։ Այս բոլորի հետևանքը լինում է այն, որ դաշնակցականները, թողնելով իշխանությունը, իրենց ուժերը անգնաս դուրս են բերում մարտադաշտից և մի մասը անցնում է ընդհատակյա աշխատանքի, մի մասը զբաղվում գյուղերը, իսկ փոքր մասն էլ, հատկապես զինվորական ռեակցիոն սպայությունը, «հավատարմություն» է հայտնում Սովետական իշխանությանը՝ որպեսզի ապստամբության դեմ պայքարելու հնարավորություն ունենա։ Այսպիսով՝ օգտվելով իր նկատմամբ կիրառվող մեղմ քաղաքականությունից՝ թշնամին սկսում է կռվի պատրաստվել ապստամբ ժողովրդի դեմ։ Նա խմբեր է կազմում և Ղարաքիլիսա տանող երկաթուղագիծը փակում, հաղորդակցության մեջ մտնում կառավարության հետ և զորք պահանջում Սովետական իշխանության դեմ պայքարելու համար։

Այսպիսով, իշխանությունը կորցնելու առաջին իսկ օրից հակառակորդը անցնում է ընդհատակյա ակտիվ պայքարի։ Նրան հաջողվում է իր ներկայացուցիչն ունենալ նորաստեղծ կարմիր բանակի ղեկավար պոստում (շտաբի պետ է նշանակվում նախկին երկրորդ հեծյալ գնդի հրամանատար, սպիտակգվարդիական գնդապետ Կորգանովը), որը Սովետական իշխանությանը ծառայելու պատրաստակամություն է հայտնում, սակայն, ինչպես պարզվում է, քայքայիչ աշխատանք է կատարում զինված ուժերի ներսում։

Ռազմա-ռևոլուցիոն կոմիտեն և Ալեքսանդրոպոլի պարտիական կազմակերպության ղեկավարները վճռական միջոցառումների չեն դիմում իրենց

[1] ՀՍՍՌ ԴԱ Պատմության ինստիտուտի արխիվ, գ. 102, էջ 170։

ուժերը դասավորելու համար, չեն ամրացնում իրենց թիկունքը, ռազմական ակտիվ գործողություններ չեն ծավալում թշնամու դեմ։ Մինչդեռ հակառակորդին հարձակման նախաձեռնությունից դրկելու, նրան ջախջախելու և ամբողջ երկրում սովետական կարգեր հաստատելու անհրաժեշտությունը թելադրում էր ոչ միայն գրաղվել Ալեքսանդրոպոլի, Կարսի և Սարիղամիշի շրջաններում հաստատված նոր իշխանությունը ամրացնելու հարցով, այլև հարձակում սկսել Ալեքսանդրոպոլ—Երևան, Ալեքսանդրոպոլ—Ղարաքիլիսա երկաթուղու ուղղությամբ։ Դրանով իսկ ապստամբներին կհաջողվեր հսկողության տակ վերցնել երկաթուղին, օգնել Ղարաքիլիսայի, Դիլիջանի ու Նոր-Բայազետի ապստամբություններին, միանալով նրանց, կապ հաստատել Սովետական Ադրբեջանի և ռուսական Կարմիր Բանակի հետ ու այնուհետև աքցանի մեջ վերցնել Երևանը։

Ռազմա-ռևոլուցիոն Կոմիտեն չկատարեց ոչ առաջինը և ոչ էլ երկրորդը։ Ռևկոմի անդամներից ոմանք, մանավանդ Արմենկոմի ներկայացուցիչները, կոզմնակից էին, անհրաժեշտության դեպքում դիմել պաշտպանողական կռվի. այդ տեսակետը պաշտպանում էր շտաբի պետ դավաճան Կորդանովը, որի հիմնական նպատակն էր կանխել կամ ձգձգել ապստամբների հարձակումը, հնարավորություն ստեղծել, որ դաշնակները կազմակերպվեն և արշավ սկսեն ապստամբների դեմ, իսկ այդ նշանակում էր մարտական գործողությունների նախաձեռնությունը տալ հակառակորդին։

Եվ այսպես, Ալեքսանդրոպոլի, Կարսի և Սարիղամիշի ապստամբների վերին աստիճանի խանդավառ բարձր տրամադրությունը և Սովետական իշխանության համար կռվելու նրանց վճռականությունը Ռևկոմի կողմից չօգտագործվեց հարձակողական ակտիվ գործողություններ սկսելու համար։

Պաշտպանողական տակտիկայի հետևանքով ռևոլուցիոն զորքերը մատնվում են անգործության։ Դրանից օգտվում է հակառակորդը և մի քանի ռեակցիոն սպաների միջոցով քայքայիչ աշխատանք սկսում զորամասերում։

Դաշնակցականները և ամբողջ կոնտրռևոլուցիան՝ լցված կատաղի ատելությամբ դեպի ապստամբ ժողովուրդը և ստեղծված Սովետական իշխանությունը, որոշում են արյան մեջ խեղդել ապստամբությունը։ Նրանք դիմում են արտակարգ միջոցների։ Հավատ չընծայելով կադրային զորամասերին, դիմում են կամավորական-մաուզերիստական հատուկ պատժիչ ջոկատի ստեղծմանը, որի ղեկավարությունը հանձնում են ժողովրդի դահիճ Սեպուհին, տալով նրան արտակարգ իրավունքներ։

Մայիսի 9-ին հրաման է տրվում 8-րդ գնդից հինգ վաշտ դինվոր կենտրոնացնել Մարգարա գյուղում (8-րդ գունդը կանգնած էր Սուրմալուում)։ Խմբապետ Սեպուհը այդ վաշտերից ընտրում է միայն երեք հարյուր հոգի՝ որպես հետևակ, վաթսուն՝ հեծյալ դինվոր և նրանց միացնում է իր մաուզերիստներին։ Հիշված ուժերով նա շարժվում է Ալեքսանդրոպոլի վրա։ Ջոկատի դինվորները, բացի մաուզերիստներից, պատրաստ էին առաջին իսկ հարմար մոմենտին անցնել ապստամբների կողմը։ Ջոկատի սպաները պատմում են, որ մինչև ապստամբների հետ հանդիպում ունենալը, դեռևս ճանապարհից 160 մարդ իրենց զենքերով դասալքում են, չցանկանալով մասնակցել քաղաքացիական կռվին։ Զրահապատի երևալը մարտից հրաժարվելու որոշակի տրամադրություն է ստեղծում ջոկատում։ Հրետա-

նուն դժվարությամբ են ստիպում կրակել զրահապատի վրա և արկերը ակնհայտորեն թռչում անցնում են կամ չեն հասնում։ Սպաները վհատվում են, զգում, որ զինվորները իրենց չեն լսում։ «Մոմենտ էր լինում ջոկատում, երբ զինվորական մասսան պատրաստ էր մաուզերիստներին պատառ-պատառ անելու»։[1]

Ահա այս էր դաշնակների կողմից Ալեքսանդրոպոլի ապստամբ բանվորների և զինվորների դեմ քշվող զինվորների տրամադրությունը։ Այս խոստովանությունը ապացուցում է, որ եթե ապստամբ ուժերը ռազմական ակտիվ գործողությունների մեջ դրվեին, թշնամու վրա ճնշում գործադրեին, Սեպուհի ջոկատը ամբողջովին կջախջախվեր։ Մինչդեռ դուրս է բերվում միմիայն զրահապատի մի մասը, որը հանդիպում է թշնամուն Անի—Աղին կայարանների միջև ընկած շրջանում։ Նույնիսկ այդ մասն էլ վճռական գործողությունների չի դիմում։ «Կառավարական զորքի մեջ,—ասված է վերը հիշված փաստաթղթում,—քաջություն է առաջ գալիս, շնորհիվ զրահապատի անվճռական կերպով ետ ու առաջ շարժվելուն»։[2]

Սեպուհի ջոկատի սպաները այն կարծիքին են եղել, որ կարմիրների վճռականության դեպքում զորքը պատրաստ էր միանալու նրանց։[3]

Սեպուհի պատժիչ ջոկատի կազմում գտնվող «ընտրված» զինվորների այդ տրամադրությունները պատահական չէին, այլ հետևանք էին մինչ այդ նրանց մեջ կատարված ռևոլյուցիոն աշխատանքի։

Ռազմա-ռևոլյուցիոն Կոմիտեի և Ալեքսանդրոպոլի կազմակերպության ղեկավարների ռազմական ակտիվ գործողությունների հարցում վճռականություն չցուցաբերելը ոմանք բացատրում են նրանով, որ դիմադրելու համար ապստամբները բավարար քանակով ուժ չունեին, որ «պարենավորման բացակայությունը» խեղդեց ապստամբությունը և այլն։ Այդ ճիշտ չէ։ Ապստամբները իրենց քաղաքական-բարոյական վիճակով և թվական գերակշռությամբ կարող էին ոչ միայն կանգնեցնել Սեպուհի ջոկատը և ջախջախել այն, այլև հարձակման անցնել։ Պարենի բացակայությունը կամ նրա սուր կարիքը նախքան ապստամբությունն էլ գոյություն ուներ, սակայն այդ պայմաններում զորքը և բանվորությունը մեծագույն խանդավառությամբ և վճռականությամբ իշխանությունը վերցրին իրենց ձեռքը։ Պայքարի ելքը ապստամբության հաղթանակից հետո որոշվում էր նրանով, թե ո՞ր կողմը նախաձեռնություն ու հարձակողական ձեռներեցություն կցուցաբերի, որ կողմը որ համարձակությամբ ու վճռականությամբ կգործեր, հաղթանակն էլ նրա կողմը կլիներ։ Վճռական մոմենտին վճռական ճակատամարտից խուսափելը մահ էր ապստամբության համար։ «Ռևոլյուցիայի, ինչպես և պատերազմի մեջ, անպայման անհրաժեշտ է վճռական վայրկյանին ամեն ինչ բախտախաղի դնել,—գրում է Մարքսը,—ինչպես էլ լինեին շանսերը։ Չկա պատմության մեջ հաջողությամբ պսակված ռևոլյուցիա, որ չըհավաստեր այդ ճշմարտությունների ճշտությունը»։[4]

---

1 ՀԿ(բ)Պ ԿԿ-ին կից ՊԱ, ֆ. 30, գ. 6, էջ 7—9։

2 Նույն տեղում։

3 Նույն տեղում։

4 Կ. Մարքս և Ֆ. Էնգելս—«Ռևոլյուցիան և կոնտրռևոլյուցիան Գերմանիայում», էջ 101։

Մայիսի 12-ին Ռեկոմը մշակում է մի պլան, որի համաձայն ռազմական ակտիվ գործողություններ պետք է սկսվեին Ղարաքիլիսայի ուղղությամբ։ Պիտի ապստամբվեր Դիլիջանը և միանար Նոր-Բայազետին։ Ապա համագործակցելով Կարսի և Սարիղամիշի ապստամբների հետ, երկու ուղղություններով հարձակում պետք է սկսվեր Երևանի դեմ։ Բայց մայիսի 13-ին Ռևկոմը հրաժարվում է այդ պլանից և որոշում ամբանալ Ալեքսանդրոպոլի շրջակայքում, գործողություններ սկսել Սեպուհի դեմ՝ Բայանդուր գյուղի ուղղությամբ։

Մինչև մայիսի 12-ը ապստամբ զորքի մեջ տիրում էր մարտական բարձր տրամադրություն, զինվորները պահանջում էին հարձակվել և դժգոհություն էին հայտնում Ռևկոմի դանդաղկոտության առթիվ։ Իսկ շտաբի պետի կասկածելի ու հանցավոր հրամանները, ուժերի դանդաղ մարտական դասավորումը առաջացրել էին անվստահություն։ Ռազմա-հեղափոխական Կոմիտեի դանդաղկոտությունն ու անվճռականությունը դժգոհություն էր առաջացրել ամենից առաջ պարտիական կազմակերպությանների և երկաթուղայինների շրջանում. այդ դժգոհությունն ավելի է ուժեղանում, երբ շտաբի պետ Կորգանովի բացահայտ ու դավաճանական կարգադրությունները ավելի պարզորոշ են դառնում։

Մայիսի 13-ին Օրթաքիլիսա գյուղի մոտերքում ապստամբների մի վաշտ հանդիպում է թշնամուն, որը ջախջախվում ու ետ է շպրտվում։ Ապստամբները գրավում են երկաթուղային կայարանը, բայց Կորգանովը Մուսայելյանի անունից կարգադրություն է անում վաշտին՝ թողնել դրված վայրը և վերադառնալ Ալեքսանդրոպոլ։ Պարզվում է, որ Մուսայելյանը նման կարգադրություն չէր արել։ Կորգանովի թշնամական այսօրինակ կարգադրությունները նպատակ ունեին կաշկանդել ապստամբների գործողությունները, ժամանակ շահել, որպեսզի թշնամու համար նպաստավոր պայմաններ ստեղծվեն քաղաքը օղակելու համար։ Կորգանովին վստահելի անձնավորությամբ փոխարինելու պահանջը ավելի սուր կերպով դրվում է մայիսի 13-ին, բայց արդեն ուշ էր։ Վաղ առավոտյան թշնամին մտնում է Ալեքսանդրոպոլ։

Ալեքսանդրոպոլի բանվորների, զինվորների և մյուս աշխատավորների ապստամբության պարտությունը պատճառ դարձավ նաև Քավթառլուի շրջանի, Կարսի և Սարիղամիշի ապստամբությունների պարտությանը։

Հայ ժողովրդի անարգ թշնամի դաշնակները աշխատավորների դահիճ Սեպուհի և նրա մաուզերիստների միջոցով դաժանորեն ճնշում են ապըստամբությունը։ Լցված կատաղի ատելությամբ դեպի ռևոլուցիոն բանվորները, զինվորները և գյուղացիները, նրանք բանտ են նետում հարյուրավոր աշխատավորների, ժողովրդի ազատության համար մարտնչող ռեոլուցիոներների, նրանցից շատերը դնգակահարվում են, իսկ ղեկավարները արտակարգ դատարաններով մահվան դատապարտվում։ Հերոսի մահով ընկնում են հայ ժողովրդի ազատության, պետականության և ազգային վերածննդի համար պայքարող Ի. Ղարիբջանյանը, Ս. Մուսայելյանը, Ղ. Ղուկասյանը, Ա. Փանյանը, Ա. Ծուղուրյանը և շատ ուրիշները։

Մայիսյան ապստամբությունը պարտվեց, բայց հայ ժողովրդի պայքարը ընդդեմ դաշնակների հակաժողովրդական տիրապետության երբեք

չդադարեց և 1920 թվի նոյեմբերի վերջերին, ռուս մեծ ժողովրդի օգնությամբ, հերոսական 11-րդ բանակի օժանդակությամբ նա վերջնականապես ազատություն նվաճեց և երկրում հաստատեց Սովետական իշխանություն, որը միանգամ ընդմիշտ փրկեց հայ ժողովրդին, նրան տալով ազատ բարգավաճման և ազգային վերածննդի լայն հնարավորություն։